

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2017

ՔԻՍԻԱ

ԹԵՍ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույթի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույթը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարքուղքը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարքում: Պատասխանների ճնարքի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Ո՞ր պնդումներն են ճիշտ խառնուրդների վերաբերյալ.

- ա) չունեն հաստատուն քանակական բաղադրություն
 - բ) միշտ անգույն են
 - գ) բաղադրամասերը հնարավոր է բաժանել ֆիզիկական եղանակներով
 - դ) կարող են գտնվել տարբեր ազրեգատային վիճակներում
 - ե) ունեն հաստատուն քանակական բաղադրություն
- 1) գ, դ, ե
 - 2) ա, բ, գ
 - 3) բ, դ, ե
 - 4) ա, զ, դ

2

Ո՞ր զույգի նյութերում և՛ մետաղի, և՛ ոչ մետաղի իոններն ունեն նույն՝

$1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^6$ էլեկտրոնային քանաձևը.

- 1) K_2S և $MgCl_2$
- 2) CaS և KCl
- 3) K_3P և Na_3N
- 4) KCl և MgS

3

Ի՞նչ զանգվածով (գ) ծծմբային զազում է պարունակվում այնքան ատոմ, որքան ատոմ պարունակվում է 48 գ մեթանում.

- 1) 400
- 2) 80
- 3) 160
- 4) 320

4

Քվանտային թվերի ո՞ր արժեքներով է բնութագրվում $4p$ ենթամակարդակում գտնվող էլեկտրոնը.

- 1) $n = 3, \ell = 0$
- 2) $n = 4, \ell = 1$
- 3) $n = 3, \ell = 2$
- 4) $n = 4, \ell = 3$

5

Նորմալ պայմաններում ո՞ր նյութի մոլեկուլների միջև են փոխազդեցության ուժերն ամենաթույլը.

- 1) H_2O
- 2) C_2H_5OH
- 3) CO_2
- 4) C_5H_{12}

6 Ո՞ր շարքի բոլոր միացությունների մոլեկուլներում են առկա դոնորակցեպտորային մեխանիզմով առաջացած կովալենտային կապեր.

- 1) NaNO_3 , NH_4OH , CO
- 2) NH_4Cl , NaCl , Cl_2
- 3) CO , CH_4 , N_2H_4
- 4) NaOH , CO_2 , NH_3

7 Հետևյալ մեծություններից ո՞րն է փոխվում ամոնիակից և քլորաջրածնից ամոնիումի քլորիդ առաջանալիս.

- 1) ջրածնի օքսիդացման աստիճանը
- 2) ազոտի օքսիդացման աստիճանը
- 3) ազոտի և՝ օքսիդացման աստիճանը, և՝ վալենտականությունը
- 4) ազոտի վալենտականությունը

(8-9) Այրել են $6,2 \text{ g}/\text{մոլ}$ սիջին մոլային զանգվածով մեթանի և ջրածնի 40 l (ն. պ.) խառնուրդ:

8 Որքա՞ն է ծախսված թթվածնի ծավալը (լ, ն. պ.).

- 1) 38
- 2) 40
- 3) 20
- 4) 24

9 Ի՞նչ ծավալ (լ) կզարդեցնի նույն խառնուրդը $15 \text{ }^{\circ}\text{C}$ և 200 kPa ճնշման պայմաններում ($R = 8,3 \text{ J/K} \cdot \text{mol}$, $T_0 = 273 \text{ K}$).

- 1) 22,44
- 2) 21,34
- 3) 11,22
- 4) 20,48

10 Լուծույթում 2 մոլ ֆոսֆորի(V) օքսիդի և 6 մոլ նատրիումի հիդրօքսիդի փոխազդեցությունից ո՞ր աղն(երն) է(են) ստացվում և ի՞նչ նյութաքանակով.

- 1) Na_2HPO_4 , 4 մոլ
- 2) NaH_2PO_4 , 3 մոլ
- 3) NaH_2PO_4 և Na_3PO_4 , 2-ական մոլ
- 4) NaH_2PO_4 և Na_2HPO_4 , 2-ական մոլ

11

Ի՞նչ գործոններից է կախված քիմիական ռեակցիայի շերտելիութը (ստանդարտ պայմաններում)։

ա) նյութի ազրեգատային վիճակից

բ) ընթանալու ժամանակից

գ) նյութի բնույթից

դ) ընթանալու վայրից

1) ա, բ

2) բ, գ

3) բ, դ

4) ա, գ

12

Ի՞նչ փոփոխություններ կղիտվեն $N_2 + 3H_2 \rightleftharpoons 2NH_3$ հավասարակշռության համակարգում ձնշումը մեծացնելիս.

ա) կմեծանա ամոնիակի ելքը

բ) հավասարակշռությունը չի տեղաշարժվի

գ) ուղիղ ռեակցիայի արագությունը կմեծանա

դ) հավասարակշռությունը կտեղաշարժվի ելանյութերի առաջացման կողմը

1) ա, գ

2) բ, գ

3) զ, դ

4) ա, բ

13

Համապատասխանեցրե՛ք քիմիական ռեակցիայի հավասարումը նրա կինետիկ հավասարման հետ։

Ռեակցիայի հավասարում	Ռեակցիայի կինետիկ հավասարում
ա) $S_{(q)} + O_{2(q)} = SO_{2(q)}$	1) $v = k [Fe] [O_2]$
բ) $2CO_{(q)} + O_{2(q)} = 2CO_{2(q)}$	2) $v = k [O_2]$
զ) $2Fe_{(w)} + O_{2(q)} = 2FeO_{(w)}$	3) $v = k [S] [O_2]$
դ) $C_{(w)} + O_{2(q)} = CO_{2(q)}$	4) $v = k [CO]^2 [O_2]$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճշշտ։

1) ա3, բ4, զ2, դ4

2) ա2, բ4, զ1, դ2

3) ա3, բ4, զ1, դ2

4) ա3, բ4, զ2, դ2

14 Ո՞ր նյութն ավելացնելիս ջրային լուծույթում ընթացող $\text{NO}_2 + \text{H}_2\text{O} \rightarrow \text{HNO}_2 + \text{HNO}_3$ դարձելի ռեակցիայի հավասարակշռությունը կտեղաշարժվի դեպի աջ.

- 1) KOH
- 2) HCl
- 3) HNO_3
- 4) SO_3

15 Ո՞ր շարքի իոնները կարելի է լուծույթում հայտաբերել համապատասխան գույնով նստվածքների առաջացմամբ.

- 1) Na^+ , Al^{3+} , OH^-
- 2) CO_3^{2-} , Ba^{2+} , NO_3^-
- 3) Cu^{2+} , Fe^{3+} , Ag^+
- 4) Ca^{2+} , Br^- , K^+

16 KHCO_3 -ի նուր լուծույթում առավել մեծ քանակությամբ ո՞ր իոններն են պարունակվում.

- 1) CO_3^{2-}
- 2) H^+
- 3) HCO_3^-
- 4) K^+

17 Ի՞նչ քանակով (մոլ) վերականգնիչ է մասնակցում 1 մոլ օքսիդիչի վերականգնման գործընթացին՝ հետևյալ ուրվագրով վերօք ռեակցիայում.



- 1) 5
- 2) 2
- 3) 1
- 4) 3

18 0,1-ական մոլ քլորաջրածին և քացախաթթու պարունակող լուծույթին ավելացրել են 10 գ նատրիումի հիդրօքսիդ: Ո՞ր շարք ներառված նյութերն են պարունակվում վերջնական լուծույթում.

- 1) NaCl, CH_3COONa , NaOH
- 2) NaCl, CH_3COONa
- 3) HCl, CH_3COONa
- 4) NaCl, CH₃COOH, NaOH

19

Թվարկված նյութերից որո՞նք չունեն մոլեկուլային կառուցվածք.

a) Al , p) C_2H_5OH , q) KCl , r) Na_2SO_4 , t) C_5H_{12}

- 1) բ, դ
- 2) ա, բ
- 3) ա, բ, է
- 4) ա, զ, դ

(20-21) Զրում լուծել են հետևյալ զագերը. a) O_2 , p) SO_3 , q) $HCOH$, r) HCl

20

Թվարկվածներից ո՞ր զագերի լուծույթները կեկտրական հոսանք չեն հաղորդում.

- 1) ա, զ
- 2) բ, դ
- 3) զ, դ
- 4) ա, դ

21

Որքա՞ն է նշված զագերը ջրում լուծելիս քիմիական ռեակցիայի հետևանքով առաջացած կեկտրոլիտի մոլային զանգվածը (գ/մոլ).

- 1) 82
- 2) 64
- 3) 36,5
- 4) 98

22

Պղնձի և այյումինի փոշիների խառնուրդի վրա ավելացրել են ա գ ալկալու լուծույթ (ավելցուկով): Որոշ ժամանակ անց նստվածքը հեռացրել են և լուծույթը նորից կշռել: Դրանից հետո լուծույթի զանգվածը կազմել է Ե գ: Ինչպես ս են փոխհարաբերվում այդ զանգվածները.

- 1) $a >> b$
- 2) $a > b$
- 3) $b > a$
- 4) $a = b$

23

Որքա՞ն է եռացնելու միջոցով կալցիումի հիդրոկարբոնատով պայմանավորված ջրի կոշտության վերացման ռեակցիայի կրճատ իոնական հավասարման գործակիցների գումարը.

- 1) 8
- 2) 4
- 3) 5
- 4) 6

(24-25) Տրված է փոխարկումների հետևյալ շղթան՝ $Ca \rightarrow X \rightarrow Ca(NO_3)_2 \rightarrow Y \rightarrow CaO$:

24

Ո՞ր զույգի նյութերը կարող են լինել X և Y նյութերը փոխարկումների այդ շղթայում համապատասխանաբար.

- 1) $Ca(OH)_2$ և $CaCO_3$
- 2) CaO և $CaCl_2$
- 3) $Ca(OH)_2$ և $CaBr_2$
- 4) $CaCl_2$ և $CaBr_2$

25

Այդ փոխարկումների շղթայում տրված Ca և $Ca(NO_3)_2$ նյութերի հետ ո՞ր զույգի ազդանյութերն են փոխազդում՝ առաջացնելով X-ը և Y-ը համապատասխանաբար.

- 1) HCl և $MgCO_3$
- 2) H_2O և Na_2CO_3
- 3) H_2O և HCl
- 4) $NaOH$ և K_2CO_3

26

Ինչպիսի՞ն կլինի լուծույթի միջավայրը ծծմբական թթվի և կալիումի հիդրօքսիդի հավասար ծավալներով հավասարամոլային լուծույթները խառնելիս.

- 1) ուժեղ հիմնային
- 2) թույլ հիմնային
- 3) չեղոք
- 4) թթվային

27

Համապատասխանեցրե՛ք փոխազդող նյութերը, ուսակցիաների վերջանյութերը և ստացվող նյութերում ջրածնի օքսիդացման աստիճանը.

Փոխազդող նյութեր	Վերջանյութեր	Ջրածնի օքսիդացման աստիճան
ա) $Cu + H_2SO_{4(l)} \rightarrow$	1) NaH_2	Ա) -1
թ) $Zn + H_2SO_{4(l)} \rightarrow$	2) $ZnSO_4 + H_2$	Բ) 0
զ) $Na + H_2 \rightarrow$	3) CH_3OH	Գ) +1
դ) $HCHO + H_2 \rightarrow$	4) $CuSO_4 + SO_2 + H_2O$	Դ) +2
	5) NaH	Ե) -2
	6) $ZnSO_4 + S + H_2O$	

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճշշտ.

- 1) ա4Գ, թ6Գ, զ5Ա, դ3Գ
- 2) ա4Ա, թ2Բ, զ1Դ, դ3Գ
- 3) ա4Ա, թ6Բ, զ1Ե, դ3Ա
- 4) ա4Գ, թ2Բ, զ5Ա, դ3Գ

28

Ո՞րն է աղաթթվի և ամոնիումի հիդրօքսիդի փոխազդեցության կրծատ իոնային հավասարումը.

- 1) $H^+ + NH_4OH = NH_4^+ + H_2O$
- 2) $H_3O^+ + OH^- = 2H_2O$
- 3) $H^+ + OH^- = H_2O$
- 4) $HCl + OH^- = Cl^- + H_2O$

29

Ո՞ր շարքի մետաղներից յուրաքանչյուրի հետ հպումը կարագացնի երկարի էլեկտրաքիմիական կոռոզիան.

- 1) Ag, Hg, Mg
- 2) Cu, Ag, Au
- 3) Cu, Ni, Zn
- 4) Zn, Mg, Al

30


Զրային լուծույթում ո՞ր զույգի նյութերի փոխազդեցությունից սիլիկաթու չի կարող ստացվել.



- 1) բ, գ
- 2) ա, բ
- 3) զ, դ
- 4) բ, դ

31

Ո՞ր շարք են ներառված փոխարկումներն իրականացնելու համար անհրաժեշտ ազդանյութերի բանաձևերի ճիշտ հաջորդականությունը.



- 1) H_2, H_2SO_4, HCl, KOH
- 2) $O_2, H_2SO_4, BaCl_2, KOH$
- 3) $H_2O, SO_3, NaCl, NaOH$
- 4) O_2, SO_3, HCl, H_2O

32

Համապատասխանեցրե՛ք ելանյութերը և դրանցից ստացվող հնարավոր վերջանյութերի բանաձևերը.

Ելանյութեր	Վերջանյութերի բանաձևեր
ա) կալցիումի կարբիդ	1) $\text{CH}_2\text{OH} - \text{CH}_2\text{OH}$
բ) բենզոլ	2) $\text{CH} \equiv \text{CH}$
գ) էթանոլ	3) $\text{CH}_2=\text{CH}-\text{CH}=\text{CH}_2$
դ) վինիլացետիլեն	4) $\text{C}_6\text{H}_5\text{Cl}$
	5) $\text{CH}_2=\text{CH}-\text{C}(\text{Cl})=\text{CH}_2$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճշշտ.

- 1) ա5, բ4, զ3, դ2
- 2) ա2, բ4, զ2, դ5
- 3) ա2, բ1, զ5, դ2
- 4) ա2, բ4, զ3, դ5

(33-34) Երկու ածխաջրածինների գոլորշինների խառնուրդն արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթի հետ փոխազդում է մասնակիորեն, իսկ բրոմաջրածնի հետ ամրողջությամբ:

33

Ո՞ր նյութերը կարող են պարունակվել տրված նյութերի խառնուրդում.

- 1) էթին և էթեն
- 2) բութաղիեն և բութան
- 3) էթին և պրոպան
- 4) էթիլեն և էթան

34

Ո՞րն է համապատասխանում ածխածնի ասոմի հիբրիդային վիճակի փոփոխությանը, օրգանական նյութերի ելային խառնուրդն ավելցուկով վերցրած շրածնով հիդրելիս.

- 1) $\text{sp}^2 \rightarrow \text{sp}^3, \text{sp}^3 \rightarrow \text{sp}^2$
- 2) $\text{sp}^2 \rightarrow \text{sp}^2, \text{sp}^2 \rightarrow \text{sp}^3$
- 3) $\text{sp} \rightarrow \text{sp}^3, \text{sp}^2 \rightarrow \text{sp}^3$
- 4) $\text{sp}^3 \rightarrow \text{sp}, \text{sp}^2 \rightarrow \text{sp}$

(35-36) Տրված են հետևյալ նյութերը.

ա) ֆենոլ բ) ացետոն գ) քլորէթան դ) ացետալդեհիդ ե) մրջնաթթու

35 Որո՞նց հետ կփոխազդի NaOH -ը.

- 1) ա, գ, դ
- 2) ա, բ, ե
- 3) բ, դ, ե
- 4) ա, զ, ե

36 Ո՞ր անօրգանական նյութը կստացվի մրջնաթթվի և NaOH -ի փոխազդեցության օրգանական արգասիքի և արծաթի օքսիդի ամոնիակային լուծութի փոխազդեցությունից.

- 1) նատրիումի հիդրոկարբոնատ
- 2) նատրիումի օքսիդ
- 3) նատրիումի հիդրիդ
- 4) նատրիումի կարբոնատ

37 Բութանի և երկմեթիլամինի ախտությամբ խառնուրդին ավելացրել են հավասար ծավալով բրոմաջրածին և ռեակցիան ավարտելուց հետո պարզել, որ մնացած գազային խառնուրդի խտությունը ե է: Ի՞նչ փոխարարերության մեջ են ա-ն և բ-ն.

- 1) $b << a$
- 2) $a > b$
- 3) $a < b$
- 4) $a = b$

(38-39) $\text{C}_4\text{H}_8\text{O}_2$ բանաձևն ունեցող էսթերը փոխազդել է արծաթի(I) օքսիդի ամոնիակային լուծութի հետ:

38 Ո՞ր զույգ են ներառված խնդրի պայմանին բավարարող էսթերների անվանումները.

- 1) իզոպրոպիլֆորմիատ, մեթիլֆորմիատ
- 2) էթիլացետատ, մեթիլպրոպիոնատ
- 3) պրոպիլֆորմիատ, իզոպրոպիլֆորմիատ
- 4) պրոպիլֆորմիատ, էթիլֆորմիատ

39 Որքա՞ն է $\text{C}_4\text{H}_8\text{O}_2$ բանաձևն ունեցող էսթերների ընդհանուր թիվը.

- 1) 5
- 2) 3
- 3) 2
- 4) 4

40

Ո՞ր ամինաթթուների մնացորդներն են մտնում երկապտիդի բաղադրության մեջ, եթե նրա մեկ մոլը փոխազդում է քլորաջրածնի հետ 1 : 1, իսկ կալիումի հիդրօքսիդի հետ 1 : 2 մոլային հարաբերությամբ.


- 1) ֆենիլալանին և զլիցին
- 2) զլիցին և զլուտամինաթթու
- 3) ալանին և ֆենիլալանին
- 4) ալանին և զլիցին

41

Որքա՞ն է R տարրի բարձրագույն օքսիդի մոլային զանգվածը (գ/մոլ), եթե հայտնի է, որ այդ օքսիդի 1 մոլեկուլում թթվածին տարրի զանգվածը 142 գ.ա.մ.-ով փոքր է R տարրի զանգվածից, իսկ ցնդող ջրածնային միացությունն ունի HR բանաձևը:

42

H՞նչ քանակությամբ (կՕ) շերմություն է անջատվել ծծմբածխածինը լրիվ այրելիս, եթե առաջացած ծծմբի(IV) օքսիդից համապատասխան փոխարկումներով ստացվել է 245 գ ծծմբական թթու: Ծծմբածխածնի այրման շերմաքիմիական հավասարումն է.



43

Քացախաթթվի լուծույթում պարունակում են թթվի $9,9 \cdot 10^{19}$ չղիտցված մոլեկուլներ և գումարային $2 \cdot 10^{18}$ հիդրօքսոնիում և ացետատ իոններ: Որքա՞ն է քացախաթթվի ռիտոցման աստիճանն այդ լուծույթում (%):

44

Պարբերական համակարգի երկրորդ խմբի զիսավոր ենթախմբի մետաղի $0,25$ մոլ քանակով ացետատի երկինքատը $1,806 \cdot 10^{25}$ էլեկտրոն է պարունակում: Որքա՞ն է մետաղի հարաբերական ատոմային զանգվածը:

45

Քանի՞ մոլեկուլ ջուր է պարունակում ծծմբական թթվի հիդրատներից մեկի մոլեկուլը, եթե նրանում թթվածնի ատոմների թիվը 1,25 անգամ մեծ է ջրածնի ատոմների թվից:

- (46-47) Փակ անոքում գտնվող խառնուրդը, որում ածխածնի(II) օքսիդի կոնցենտրացիան 0,8 մոլ/լ է, իսկ քլորինը՝ 0,6 մոլ/լ, լուսավորել են արևի լույսով: Հնթացել է $CO_{(զազ)} + Cl_2(զազ) = COCl_2$ ռեակցիան, և 3 վայրկյան անց հաստատվել է հավասարակշռություն, որտեղ ածխածնի(II) օքսիդի կոնցենտրացիան հավասարվել է 0,4 մոլ/լ-ի:

46

Որքա՞ն է ստացված խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

47

Որքա՞ն է ֆոսգենի՝ $COCl_2$, ստացածման միջին արագությունը (մոլ/լ · րոպե):

- (48-49) Ամոնիակի և ջրածնի խառնուրդը տաքացրած պղնձի(II) օքսիդ (ավելցուկով) պարունակող խողովակով անցկացնելիս պինդ մնացորդի զանգվածը պակասել է 10 գրամով: Ստացված զազագոլորշային խառնուրդը ֆուֆորի(V) օքսիդ պարունակող խողովակով անցկացնելիս մնացել է 2,8 լ (ն. պ.) չփոխազդած զազ:

48

Որքա՞ն է ջրածնի ծավալային բաժինն (%) ամոնիակի և ջրածնի ելային խառնուրդում:

49

Ի՞նչ զանգվածով (q) պղնձի(II) օքսիդ է վերականգնվել:

- (50-51) Երկարի(III) քլորիդի 1 մոլ/լ կոնցենտրացիայով 10 լ ջրային լուծույթում աղբ հիդրոլիզվել է: Առաջին փուլն ընթացել է 16 %-ով, 2-րդը՝ 2 %-ով, իսկ երրորդ փուլն անտեսվում է:

50

Որքա՞ն է գոյացած ջրածնի կատիոնների (H^+) քանակածը (մգ):

51

Որքա՞ն է չհիդրոլիզված աղի քանակածը (գ):

- (52-53) Ազուտական թթվի 24,75 գ լուծույթի մեջ, որը պարունակում է օրածնի և թթվածնի հավասար թվով ատոմներ, ընկղմել են պղնձի լար և պահել մինչև ռեակցիայի ավարտը:

52

Որքա՞ն է անջատված զազի քանակը (մմոլ):

53

Որքա՞ն է պղնձե լարի զանգվածի փոփոխությունը (մգ):

- (54-55) Պղնձելիքն արծաթապատելու նպատակով այն օգտագործել են որպես կաթող (որպես անող ծառայել է զրաֆիտե էլեկտրոդը) և իրականացրել արծաթի նիտրատ պարունակող 43,49 գ ջրային լուծույթի էլեկտրոլիզ: Էլեկտրոլիզը դադարեցրել են, երբ իրի զանգվածն ավելացել է 2,7 զրամով, իսկ անողի վրա անշատվել է 896 մլ (ն. պ.) զազ:

54

Որքա՞ն է կաթողի վրա անշատված զազի ծավալը (մլ, ն. պ.):

55

Որքա՞ն է թթվի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

- (56-58) Երկաթի(II) սուլֆիդի, կալիումի հիդրոկարբոնատի և կալիումի քլորիդի 40 գ խառնուրդի և 9,125 % զանգվածային բաժնով քլորաջրածնի լուծույթի փոխազդեցությունից ստացված զազային խառնուրդը ծծմբային զազի ջրային լուծույթի միջով անցկացնելիս առաջացել է 4,8 գ պինդ նյութ, իսկ մնացած չոր զազը շիկացած կորսի վրայով անցկացնելիս ծավալը մեծացել է 6,72 լիտրով (ն. պ.):

56

Որքա՞ն է ելային խառնուրդում փոքր մոլային զանգվածով աղի զանգվածային բաժինը (%):

57

Որքա՞ն է ելային խառնուրդն աղաթթվով մշակելուց հետո ստացված զազային խառնուրդում մեծ մոլային զանգվածով զազային բաղադրիչի ծավալային բաժինը (%):

58

Որքա՞ն է աղերի խառնուրդի հետ փոխազդած աղաթթվի լուծույթի զանգվածը (գ):

(59-61) Ալկալիական մետաղի 77,55 գ սուլֆիտ պարունակող 380,25 գ լուծույթին այրումինի քլորիդ ավելացնելիս ստացվել է 39 գ նստվածք, և անջատվել է զազ: Անջատված զազը լրիվ հեռացնելուց հետո մնացած լուծույթը քանակապես փոխազդել է $KMnO_4$ -ի 0,5 մոլ/լ կոնցենտրացիայով 100 մլ ջրային լուծույթի հետ:

59

Որքա՞ն է ալկալիական մետաղի սուլֆիտի մոլային զանգվածը (գ/մոլ):


60

Որքա՞ն է անջատված զազի զանգվածը (գ):

61

Որքա՞ն է նստվածքի հեռացումից և զազի անջատումից հետո մնացած լուծույթի զանգվածը (գ):

- (62-64) Նորմալ բութանի 145 գ նմուշը կրեկինգի ենթարկելիս կլանվել է 2,7 Q կԶ ջերմություն, իսկ կրեկինգն ընթացել է երկու ուղղությամբ՝ ըստ հետևյալ ջերմաքիմիական հավասարումների.



Ստացված զազային խառնուրդն անցկացրել են անհրաժեշտ քանակով բրուժի 20 % զանգվածային բաժնով բրումաջրի միջով:

62

Բութանի ո՞ր մասն է (%) քայքայվել մեթանի և պրոպենի առաջացմամբ:

63

Որքա՞ն է ծախսված բրումաջրի զանգվածը (q):

64

Որքա՞ն է ստացված փոքր մոլային զանգվածով երկրումածանցյալի զանգվածը (q):

- (65-67) Այսումինի և պղնձի համաձուլվածքի 38,4 գ զանգվածով նմուշը մշակել են ավելցուկով աղաթթվով: Մնացորդը լվացել են և լուծել 50,61 % զանգվածային բաժնով 74,7 գ ազոտական թթվում: Ստացված լուծույթը գոլորշացրել են, չոր մնացորդը՝ շիկացրել, որի արդյունքում ստացվել է զագերի խառնուրդ, և մնացել է 12 գ զանգվածով պինդ նյութ:

65

Որքա՞ն է այսումինի զանգվածային բաժինը համաձուլվածքում (%):

66

Որքա՞ն է աղի զանգվածային բաժինը (%) համաձուլվածքի մնացորդն ազոտական թթվում լուծելիս ստացված լուծույթում:

67

Որքա՞ն է չոր մնացորդը շիկացնելիս ստացված գազային խառնուրդում բարդ նյութի մոլային բաժինը (%):

68

Համապատասխանեցրե՛ք ելանյութերը և վերջանյութերը:

Ելանյութեր	Վերջանյութեր
w) $\text{CH}_3\text{CH}_2\text{CH} = \text{O} + \text{H}_2 \rightarrow$	1) $\text{CH}_3\text{CH}_2\text{CH}_2\text{CH} = \text{O}$
p) $\text{CH}_3\text{CH}_2\text{CH}_2\text{CH} = \text{O} + 2\text{Cu}(\text{OH})_2 \rightarrow$	2) $\text{CH}_3\text{COCH}_2\text{CH}_3$
q) $\text{CH} \equiv \text{CCH}_2\text{CH}_3 + \text{H}_2\text{O} \rightarrow$	3) $\text{CH}_3\text{CH}_2\text{CH}_2\text{OH}$
t) η) $\text{CH}_3 - \text{CH} - \text{CH}_3 + \text{CuO} \xrightarrow{\text{t}}$ OH	4) $\text{CH}_3\text{CH}_2\text{CH}_2\text{COOH} + \text{Cu}_2\text{O} + 2\text{H}_2\text{O}$ 5) $\text{CH}_3\text{COCH}_3 + \text{H}_2\text{O} + \text{Cu}$ 6) $\text{CH}_3\text{CH}_2\text{COOH} + 2\text{CuO} + \text{H}_2\text{O}$ 7) $\text{CH}_3\text{CHOHCH}_3$

69

Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը տարրի ատոմի կառուցվածքի և հատկությունների վերաբերյալ.

- 1) ${}_{93}^{235}\text{Np} \rightarrow {}_{94}^{235}\text{Pu} + \text{X}$ միջուկային ռեակցիայում X մասնիկը պրոտոնն է:
- 2) Al, Si, P, S շարքում ատոմների էլեկտրաբացասականությունը մեծանում է:
- 3) 3-րդ էներգիական մակարդակում օրբիտալների ընդհանուր թիվը 6 է:
- 4) Na, K, Rb շարքում ուժեղանում են տարրերի մետաղական հատկությունները:
- 5) Ֆուֆորի ${}^{30}\text{P}$ իզոտոպը ստացվում է ${}_{13}^{27}\text{Al} + {}_2^4\text{He} \rightarrow \dots + {}_0^1\text{n}$ միջուկային ռեակցիայի արդյունքում:
- 6) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^6 3d^{10} 4s^2$ էլեկտրոնային բանաձևը համապատասխանում է հիմնական վիճակում գտնվող ցինկի ատոմին:

Փակ անոթում որոշակի զանգվածով մետաղական կալցիումը տաքացնելիս ստացվել է օքսիդի և նիտրիդի 17,6 գ խառնուրդ, և պարզվել է՝ ողի բաղադրությունն անոթում չի փոխվել (ըստ ծավալի՝ 20 % թթվածին և 80 % ազու): Ստացված խառնուրդին ավելացրել են փոխազդեցության համար անհրաժեշտ քլորաջրածնի քանակից կրկնակի շատ քլորաջրածին պարունակող 225 գ աղաթթու (զագ չի անջատվել): Ուեակցիաների ավարտից հետո ստացված լուծույթին բավարար քանակով արծաթի նիտրատ ավելացնելիս անջատվել է սպիտակ, լոռանման նստվածք: Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը խնդրի վերաբերյալ:

- 1) Ճնշումը փակ անոթում փոխվել է:
- 2) Ստացված 17,6 գ խառնուրդում նիտրիդի զանգվածը 8 գ–ով մեծ է օքսիդի զանգվածից:
- 3) Ստացված 17,6 գ խառնուրդում օքսիդի նյութաքանակը 2 անգամ փոքր է նիտրիդի նյութաքանակից:
- 4) Քլորաջրածնի զանգվածային բաժինն աղաթթվում 21,9 % է:
- 5) Մետաղական կալցիումի զանգվածը 21 գ է:
- 6) Լոռանման նստվածքի նյութաքանակը 1,8 մոլ է: